Արձանագրություն N 3
ՋԿ-ԳՀԾՁԲ-22/5-Տ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 16 Մարտի 2022թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Ասրյանը,
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Սիմոնյանը, Ն. Ավետյանը, Գ. Մելիքսեթյանը և Ս. Ալեքսանյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

Մասնակից ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար գետերի և հեղեղատարների տեղամասերի ամրացման և մաքրման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների գնման ՋԿ-ԳՀԾՁԲ-22/5-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակիցներ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի և «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են գնահատող հանձնաժողովի 11.03.2022թ. թիվ 2 որոշմամբ պահանջված փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերով ընթացակարգի մասնակիցներ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի և «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի որոշումը

Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը որոշեց.

1. ՋԿ-ԳՀԾՁԲ-22/5-Տ ծածկագրով ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների ընտրված մասնակից հայտարարել «Հուսալի Կամար» ՍՊԸ –ին:
2. ՋԿ-ԳՀԾՁԲ-22/5-Տ ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի 2-րդ տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ին: «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի 2-րդ չափաբաժնի հայտը մերժել՝ գնային առաջարկը նախահաշվային գնից բարձր լինելու հիմքով,
3. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ Ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը,

4. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ընտրված մասնակից «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ ---------- Ս. Ասրյան

Անդամներ ---------- Ա. Սիմոնյան

---------- Ն. Ավետյան

---------- Գ. Մելիքսեթյան

---------- Ս. Ալեքսանյան

Քարտուղար ---------- Ա. Սարգսյան